



Doi: 10.56737/2953-7843-2025.02-43

ՎԱՐԴԱՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու, ԵՊՀ

ԳՐԱԲԱՐԵԱՆ ՀԱՅԵՐԵՆԻ Է (Ē) ՁԱՅՆԱԽՈՐԻ ՀՆՉՈՅԹԱԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ¹

Վին հայերէնի է (ē) հնչոյթի առնչութեամբ հայերէնագիտութեան մէջ արտայայտուել է երեք տեսակէտ. ա) է (ē)-ն եւ (e)-ին հակադրուել է, ինչպէս փակ ձայնաւորը բացին, բ) է (ē)-ն եղել է երկբարբառակերպ, գ) է (ē)-ի եւ եւ (e)-ի տարբերութիւնը քանակական էր, հետեւաբար նրանք հակադրուել են որպէս միեւնոյն ձայնաւորի երկար եւ կարճ տարբերակներ:

Է (ē)-ի՝ որպէս փակ ձայնաւորի վարկածը գալիս է Ա. Մէյէից²: Ա. Մէյէն, հնարաւոր համարելով է-ի ծագումը *oy (/oi/)* (ոյ)-ին զուգահեռ գոյութիւն ունեցած աւելի հին **ey (*ej)* երկբարբառից, գրաբարեան փուլում է-ն համարել է «պարզ ձայնաւոր» («la voyaelle simple ē»)³: Ա. Մէյէի տեսակէտը իւրովի հիմնաւորելու փորձ է արել Հր. Աճառեանը⁴: Նա հին հայերէնի է (ē) եւ եւ (e) ձայնաւորների տարբերութիւնը դիտարկել է ժամանակակից ֆրանսերէնի երկու e-երի՝ բաց՝ *è* (հմմտ. *très* [trɛ] «շատ», *après* [apʁɛ] «հետո», *mère* [mɛ:r] «մայր», *père* [pɛ:r] «հայր») եւ փակ՝ *é* (հմմտ. *année* [a-ne] «տարի», *thé* [te] «թէյ», *été* [e-te] «ամառ», *passé* [pa-se] «անցեալ»), ունեցած հնչարտաբերական եւ դիրքային տարբերութիւնների հետ զուգահեռի մէջ, համապատասխանաբար՝ եւ (e)-ն համարելով բաց, իսկ է (ē)-ն՝ փակ ձայնաւոր (հմմտ. «...մեր այս երկու զրերի տարբերութիւնը Ե. դարում կայանում էր լոկ բերանի բացուածքի մէջ.

¹* Ստացուել է՝ 23.03.2025, գրախօսուել է՝ 25.03.2025: Էլ. հասցէ՝ vz.petrosyan@mail.ru:

² Տէս Ա. MEILLET, Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique, Vienne, 1936, էջ 44–45:

³ Նոյն տեղում:

⁴ Տէս Հր. ԱՃԱՌԵԱՆ, Հայոց զրերը, Երեւան, 1984, էջ 573–575:

բարբառային բնույթ վերագրող տեսակետը գալիս է, թերեւս, Հ. Հիւբշմանից, ըստ որի՝ է = ē (հմմտ. աղուէս, յուն. *ἀλώπηξ*), է = e (հմմտ. աղուեսու, յուն. *ἀλώπεκος*), է = ei, oi (?) (հմմտ. գէտ (> գիտ-եմ), յուն. *οἶδα* (< հ.-ե. **uoid-*)) եւ է = հայ. ե+յ (ի-ից կամ է-ից) (հմմտ. մէջ, միջոյ-սնսկ. *madhyas*, լատ. *medius*, բերէ «բերում է, կրում է» – սնսկ. *bharatī* եւ այլն)¹³: Այս տեսակետի հիմքում ընդհանուր առմամբ հետեւեալ փաստարկներն են. 1) Հին հայերէնում ձայնաւորների կիրառութիւնը բառավերջի դիրքում ունէր որոշակի սահմանափակումներ. մասնաւորապէս. ա) բառավերջը բացառուած դիրք էր ե (e)-ի եւ ը (ə)-ի համար. բ) ա (a) եւ ո (o) ձայնաւորները բառավերջի դիրքում հանդիպում են հրամայական եղանակի եզակի թուի ձեւերում (հմմտ. հասո՝ (= հասցրո՛ւ. հասուցանել-ից), մատո՝ (= մօտեցրո՛ւ. մատուցանել-ից), գրեա՝ (= գրի՛ր. գրել-ից), ծանեա՝ (= ճանաչի՛ր. ծանեա-ից) եւ այլն), որոշ անձնական եւ ստացական դերանունների կազմում (հմմտ. նա, նորա, նմա, սա, սոցա, քո եւ այլն), ահա, ապա բառերում եւ փոխառեալ յատուկ անունների ուղիղ ձեւում (հմմտ. Ասիա, Ագարիա, Ջաֆարիա, Կեսարիա, Կիլիկիա, Շաղիտա, Սամարիա եւ այլն). գ) ի (i)-ն չի ունեցել որեւէ սահմանափակում, այդ թւում՝ բառավերջի դիրքում, ինչպէս բառերի ուղիղ ձեւում (հմմտ. աղանի, աղի, արի «քաջ, կտրիճ», բարի «գովելի, ազնիւ», դի «դիակ», թի «թի», լի «լեցուն», կարի «շատ, խիստ», մի «մէկ», տարի «տարի» եւ այլն), այնպէս էլ ե լծորդութեան որոշ բայերի կրաւորաձեւ խոնարհման յարացոյցում՝ եզ. թ. Յ-րդ դ. ձեւում (հմմտ. առափի (= ուղարկում է), բեկանի (= կոտրում է), շարժի (= շարժում է), սիրի (= սիրում է))¹⁴. 2) Ե լծորդութեան բայերը սահմանական ներկայի եզ. թ. Յ-րդ դէմքում պիտի ունենային -յ վերջը, ինչպէս որ ա լծորդութեան բայերը (հմմտ. *արկանեյ «նետում է», *շարժեյ «շարժում է», ինչպէս որ՝ աղայ «աղում է», ընթանայ «ընթանում է»), բայց ունեն -է վերջը (հմմտ. արկանէ, շարժէ). այստեղից եզրակացութիւն է արուում, որ հին հայերէնի է-ն համարժէք էր «ե+յ»-ի. 3) Ի լծորդութեան բայերը սահմանական եղանակի ձեւում վերջում -յ չեն ստանում, որովհետեւ ի-ն եւ յ-ն լծորդակից հնչիւններ էին,

¹³ Տե՛ս Հ. Հ. ԻԻՐՇՄԱՆ, նշ. աշխ., էջ 224–225:

¹⁴ Նշուած իրողութիւնները փաստում են, որ է-ի երկբարբառային բնույթը հիմնաւորելու նպատակով է. Աղայեանի արտայայտած միտքն այն մասին, թէ գրաբարեան հայերէնում «բառը ձայնաւորով վերջանալ չէր կարող», անզգոյշ ձեւակերպում է (տե՛ս է. Գ. ԱՂԱՅԵԱՆ, նշ. աշխ., էջ 135):

միմեանց նկատմամբ գտնուել են լրացուցիչ բաշխման յարաբերութեան մէջ. նրանք ոչ միայն չեն կարող հանդէս գալ միեւնոյն հնչիւնական միջավայրում, այլեւ չեն կարող մէկը միւսին անմիջաբար յաջորդել. նրանց միջեւ հակադրութիւնը բաւարար չէ անմիջական յաջորդականութիւն կազմելու համար. 4) Ու լծորդութեան բայերը սահմանական ներկայի եզ. թ. 3-րդ դէմքում -յ վերջնահնչիւն չունեն, որովհետեւ ունեն ւ (ւ) ձայնորդը, այսինքն՝ մի կողմից՝ արդէն իսկ կայ բառը փակող բաղաձայն հնչիւն, միւս կողմից՝ յ եւ ւ կիսաձայնները եւս չեն կարող անմիջաբար միմեանց յաջորդել: Բայց այն հանգամանքը, որ անկատար անցեալում բաղաձայնին, այն է՝ ր (r) ձայնորդին նախորդող դիրքում առկայ է յ, նշանակում է, որ ւ-ն եւ յ-ն հերթագայական լծակիցներ են եւ կարող են մէկը միւսին փոխարինել (հմմտ. կիզու «կիզում է» – կիզոյր «կիզում էր», ջեռնու «տաքանում է» – ջեռնոյր «տաքանում էր»): Ինչպէս առհասարակ թեքական լեզուներում, գրաբարում եւս հերթագայութիւնը բառաձեւակազմութեան գործուն միջոց էր:

Երկրորդ վարկածի համար, թերեւս, լրացուցիչ փաստարկ կարող էր լինել նաեւ այն հանգամանքը, որ՝ 1) հ.-ե. *ei եւ *oi երկբարբառները հայերէնում ունեցել են ինչպէս է (հմմտ. *k'eiro- > սէր, *k̥oi-nā / [*k̥uei-] > քէն եւ այլն), այնպէս էլ ի (հմմտ. *goigar-on > ծիծառն, *(s)leigh- > լիզ-եմ եւ այլն) զարգացումը, 2) հին հայերէնում եւս գործել է է // ի շեշտափոխական հնչիւնափոխութիւնը (հմմտ. դէ՛գ-դիզի՛, կէ՛ս-կիսո՛յ, շէ՛ն-շինակա՛ն եւ այլն):

Չնայած վերոյիշեալ փաստարկումներին՝ այս տեսակէտը, մեր կարծիքով, ամենից անընդունելին է, որովհետեւ հակասում է այբուբենի Մաշտոցեան սկզբունքին: Այդպիսի մեկնաբանութիւնը ենթադրում է ոչ թէ պարզապէս այբուբենը ստեղծողի հնչիւնական սուր զգացողութիւն, որի առնչութեամբ կասկածներ չկան, այլ հնչոյթաբանական գիտելիքներ, իսկ հնչոյթաբանութեան՝ որպէս լեզուաբանական գիտակարգի մասին, ինչպէս գիտենք, Մաշտոցի ժամանակներում (ինչպէս եւ դրանից շատ ու շատ դարեր յետոյ)¹⁵ դեռեւս պատկերացում չկար: Բացի այդ՝ եթէ ու

¹⁵ Հնչոյթ եզրի առաջին կիրառութիւնը վերագրուում է 19-րդ դ. վերջի ֆրանսիացի լեզուաբան Ա. Դիւֆրիշ-Դեթենէտտին (1873), իսկ հնչիւնի եւ հնչոյթի՝ որպէս հնչաբանական տարբեր միաւորների առաջին բնորոշումներն առաջարկել են լեհ լեզուաբան Ի. Ա. Բոգուլէն դը Կուրտենէն եւ շուէյցարացի լեզուաբան Ֆ. դը Սուիւրը 19-րդ դ. 80-ական թթ.: Հնչոյթաբանական գիտակարգի ձեւաւորումը տեղի է ունեցել 20-րդ դ. 30-ական թթ. (տես Лингвистиче-

(օւ)–ի դէպքում ենթադրութիւն է արւում, որ նախքան Ե. դ. յունական օւ [ou]–ն վերածուել էր պարզ ձայնաւորի եւ Մաշտոցն էլ, ինչպէս առհասարակ Հայոց այբուբենի, այնպէս եւ հայերէնի ու (օւ)–ի գրութեան հարցում հիմնականում հետեւել է յունական գրութեան սկզբունքին, ապա է (է)–ի դէպքում նոյնիսկ այդպիսի ենթադրեալ հիմնաւորում չի կարող լինել, որովհետեւ յայտնի է, որ այդ ժամանակներում ինչպէս յունարէնում, այնպէս եւ լատիններէնում, որի այբուբենը նոյնպէս Մաշտոցն ունեցել է աչքի առաջ, յստակ տարբերակուել են երկար եւ կարճ *e*-եր (համապատասխանաբար՝ η, ē եւ ε, e):

Ինչ վերաբերում է ֆրանսերէնի օրինակով լայն եւ նեղ *e*-երի տարբերակման գաղափարին, ապա պիտի ասել, որ դա ֆրանսերէնի ձայնաւորական համակարգի իւրայատկութիւնն է¹⁶, տիպաբանօրէն բնորոշ չէ հնդեւրոպական լեզուների ձայնաւորական համակարգերի հնչոյթաբանական զարգացմանը, հետեւաբար հին հայերէնի երկու տիպի է (ē) / ե (e)–երի մեկնաբանութիւնը դրանց օրինակով հաւանական չէ: Մանաւանդ, որ այդպիսի երեւոյթ չի դրսեւորուել ո՛չ գրական հայերէնի զարգացման որեւէ փուլում, ո՛չ իսկ բարբառներում:

Երրորդ տեսակէտն առաջադրել ենք մենք¹⁷: Մեր համոզմամբ առնուազն մինչեւ Ե. դարի վերջը հին հայերէնի է (ē)–ն եղել է երկար ձայնաւոր: Ինչպէս արդէն տեսանք, է (ē)–ն հին հայերէնի միակ ձայնաւորն էր, որը չունէր պարզ ձայնաւորական ծագում¹⁸: Իսկ երկբարբառի պարզեցումը գոնէ սկզբնական շրջանում տալիս էր երկար ձայնաւոր, որն աւելի ուշ կարող էր վերածուել կամ չվերածուել համապատասխան կարճի:

Այն, որ է (ē)–ն եւ ե (e)–ն առնուազն Ե. դարում երկու տարբեր հնչոյթներ էին, վկայում են նրանց իմաստատարբերակիչ հակադրութիւններն

ский энциклопедический словарь, Москва, 1990, էջ 552–554, 555–557, Общее языкознание (под общ. ред. А. Е. Супруна), Минск, 1983, էջ 287–288):

¹⁶ Բացութեան եւ փակութեան աստիճանով ձայնաւորների իմաստատարբերակիչ հակադրութիւնը ֆրանսերէնում հին երեւոյթ է՝ գալիս է դեռեւս հին շրջանից՝ Ժ.–ԺԱ. դդ. (տե՛ս Н. КАТАГОЩИНА, М. ГУРЫЧЕВА, К. АЛЛЕНДОРФ, История французского языка, М., 1976, էջ 48–52):

¹⁷ Տե՛ս В. ПЕТРОСЯН, Диахроническая типология фонем ɛ в древнеармянском и ѣ в старославянском языках // «Հայագիտութեան հարցեր», Երեւան, 2016, թիւ 1(7), էջ 128–141:

¹⁸ Բացառութիւն է *(ə)lōpeku- / *alōpeku- > աղուէս (սեռ. աղուեսու) բառը. պիտի ենթադրել, որ սեռականում պահպանուել է նախնական ձեւը՝ աղուէս, իսկ -է-ով տարբերակն առաջացել է -ուէ- յաջորդականութիւն պարունակող բառերի համաբանութեամբ (հմտ. նուէր, պատուէր) կամ էլ պարզապէս գրչագրական զուգաձեւութիւն է:

ինչպէս այլ հնչոյթներին եւ հնչոյթային զրոյի հետ, այնպէս եւ մէկը միւսի հետ: Ընդ որում՝ բոլոր երեք դիրքերում:

1) բառասկզբի. ա) *է ~ ա/օ (զրո)* (հմմտ. էակն (էակ-ի «արարած. Աստուած» որոշեալ առումը) ~ ակն (ական) «աչք. գոհար», էլի «աստուած իմ» (եբր. էլ «աստուած» ձեւից) ~ լի (լիոյ) «լցուած, լիքը», էութիւն «գոյացութիւն. լինելութիւն» ~ ութիւն (գոյականակերտ վերջածանց) (է ~ օ), էջ «իջնելը» ~ աջ (-ոյ/-ու) «աջ ձեռքը. աջ կողմը» (է ~ ա), բ) *ե ~ ա* (հմմտ. եռ «եռալը» ~ առ «առնելը. գրաւելը», եզն (եզին) «ցուլ» ~ ազն (-զին) «ազգ, ժողովուրդ», եղիճ «եղինջ (բոյսը)» ~ աղիճ «բոզ, պոռնիկ», եղծ «եղծելը. հերքում» ~ աղծ «1. աղտ. կեղտ, 2. աղ»¹⁹, եղն «եղնիկ» ~ աղն (-ունք) «աղտ, կեղեւն», երդ «երդիկ. օջախ, տուն» ~ արդ (-ու) «1. յարգարանք. 2. այժմ» (ե ~ ա)). գ) *է ~ ե* (հմմտ. էլ «աստուած» (եբր.) ~ ել (-ի) «դուրս ելնելը. անցք»):

2) բառամիջի. ա) *է ~ ա* (հմմտ. գէր (գիրի) «պարարտ, չաղ» ~ գար «ծուռ, կոր», շէն (շինի) «բարեկարգ. բնակեցուած» ~ շան (շուն-ի սեռ. տր. հլ.), պէտ «պէտք, կարիք» ~ պատ «պատելը, պատում», վէր «վէրք. խոց» վար «1. հող վարելը, 2. կիրառելը», սէր «(սէր) զգացմունքը» ~ սար «1. լեռան գագաթ, 2. զէնուզարդ», վէտ «ջրի մեղմ ալիք, ծփանք» ~ վատ (-ի) «վատթար. չար», խէշ «կողքին, մօտ» ~ խաշ «խաշափայտ. չարչարանք»), բ) *է ~ ե* (հմմտ. գէտ (> գիտ-) «իմանալ» ~ գետ (-ոյ) «գետ (ջուր)», գէր (գիրի) «պարարտ, չաղ» ~ գեր (նխգր.) «վերին, բարձր», դէն (ձ.) «ցնծութեան բացականչութիւն» ~ դեն (-ի) «կրօն, հաւատ», գէն «զէնք» ~ գեն «զոհ», սէր «(սէր) զգացմունքը» ~ սեր «կաթի սեր», խէթ (խիթի) «խղճի խայթ, խղճմտանք» ~ խեթ (խեղ)²⁰ «շեղական, շիւ», վէր (վիրի) «վէրք. խոց» ~ վեր «վերելը, վերելի մասը»), գ) *է ~ ի* (հմմտ. խէթ «խղճի խայթ, խղճմտանք» ~ խիթ «ցաւ, վէրք. խուլթ. քարանձաւ», խէլ «կողմ» ~ խիլ «որոնում, փնտրտուք»), դ) *է ~ ո* (հմմտ. խէշ ~ խոշ «խոշընդոտ, արգելք»):

3) բառավերջի. *է ~ ի* (հմմտ. աղէ՛ (հրամայական-յորդորական բացականչութիւն) «ապա՛, դէ՛, օն» ~ աղի «շատ աղ պարունակող», գրէ «կռունկ

¹⁹ Տէս Հ. ՀԻԻԲԵՄԱՆ, ՀՔ, էջ 414, ՀՐ. ԱՃԱՌԵԱՆ, Հայերէն արմատական բառարան (այսուհետեւ՝ ՀԱԲ), Ի, Երեւան, 1973, էջ 132, Գ. Զահուկեան, Հայերէն ստուգաբանական բառարան (այսուհետեւ՝ ՀՍԲ), Երեւան, 2010, էջ 38:

²⁰ Տէս Առձեռն բառարան հայկազնեան լեզուի (այսուհետեւ՝ ԱԲՀԼ), Անթիլիաս, 1988, էջ 575:

թռչունը»²¹ ~ գրի «գրողում է» (գրեմ «միտքը գրի առնել» բայի սահմ. նրկ., եզ. թ., 3-րդ դ., կրաւորաձեւ խոնարհում)²²);

Առանձին դէպքերում է՛ն ազատ փոփոխական յարաբերութիւնների մէջ է ե-ի եւ ի-ի հետ (հմմտ. եղամ «կամարակապ սրահ») // էղամ (եբր.)²³, խէժ «խէժ, թանձր հիւթ» – խեժ (/խիժ), կէտ (կիտի) «ծովային կաթնասուն խոշոր կենդանի» – կեա (նոյնը), խէլ «կողմ» – խիլ («եզր» – ԲՀ)²⁴);

է (ē)-ի հնչաբանական (phonematic / фонематический) բնութագրերի ամբողջական եւ արժանահաւատ պատկեր ստանալու համար, ըստ երեւոյթին, անխուսափելի է համաժամանակեայ եւ տարաժամանակեայ հայեցակերպերի զուգակցուած քննութիւնը: Հստ այդմ.

1) Հր. Աճառեանը նկատել է, որ յունարէն-հայերէն տառադարձումներում յուն. η (ē)-ի դիմաց հայերէնում, որպէս կանոն, հանդիպում է է (հմմտ. Κυριακή > կիրակէ, ὕλη > հիւլէ, καθολική > կաթողիկէ «ընդհանրական» եւ այլն), իսկ ε (e)-ի դիմաց ե (հմմտ. ἀνγλος > անգլոս «հրեշտակ», ἐπίσκοπος > եպիսկոպոս, θέμα > թեմ եւ այլն): Իհարկէ, կան նաեւ յուն. η (ē) > հյ. ե (e) (հմմտ. ἡγήνη > եփենէ (թռչուն), ἡγεμών [he:gemon] > հեգեմոն «կուսակալ» եւ այլն) եւ, ընդհակառակն, յուն. ε (e) > հյ. է (ē) համապատասխանութիւններ²⁵, սակայն, նախ, երկրորդ կարգի օրինակները խիստ սակաւաթիւ են, բացի այդ, վերջին կարգի անցումներից, ըստ իս, օրինաչափ պիտի համարել յունարէնի շեշտակիր կարճ ε (e)-ի անցումը հյ. է (ē)-ի (հմմտ. Ἀνδρέας > Անդրէաս), որովհետեւ շեշտի տակ գտնուող ձայնաւորը անշեշտ ձայնաւորից աւելի երկար տեւողութիւն է ունենում²⁶: Նշուած իրողութիւնները, մեր կարծիքով, հին հայերէնի՝ ե եւ է գրերով նշանակուած հնչիւնների քանակական (= հնչոյթաբանական) տարբերութիւնների վկայութիւններ են:

²¹ Ավելի հին ձեւն է համարվում գրեայ-ն (տէս Գ. ՋԱՆՈՒԿԵԱՆ, ՀՄԲ, 177):

²² Տէս Ա. ԱՐԲԱՆԱՄԵԱՆ, Գրաբարի ձեռնարկ, Երեւան, 1976, էջ 110–111:

²³ Տէս Ռ. ՂԱԶԱՐԵԱՆ, Գրաբարի բառարան, Անթիլիաս, 2004, էջ 388:

²⁴ Տէս Գ. ՋԱՆՈՒԿԵԱՆ, ՀՄԲ, էջ 329:

²⁵ Յունական փոխառութիւններն ըստ Հր. ԱճԱՌԵԱՆ, Հայոց լեզուի պատմութիւն (այսուհետեւ՝ ՀԼՊ), Երեւան, 1951, հ. II, էջ 10–34: Գ. Զահուկեանի կազմած յունական փոխառութիւնների ցանկում բացակայում են անգլոս, եփենէ եւ թեմ բառերը (տէս Գ. ՋԱՆՈՒԿԵԱՆ, Հայոց լեզուի պատմութիւն. նախագրային ժամանակաշրջան (այսուհետեւ՝ ՀԼՊՆԺ), 1987, էջ 617–621):

²⁶ Ա. Ռեֆորմատսկին այդպիսի երեւոյթ է մատնանշում մասնաւորապէս արդի ուսուրէնում (տէս А. РЕФОРМАТСКИЙ, Введение в языковедение, Москва, 1967, էջ 155):

2) Հին հայերէնին խորթ չէր նաեւ է // ե հերթագայութիւնը (հմմտ. աղուէս–աղուեսու, եղէգն–եղեգան, պատնէն–պատնենի): Որպէս կանոն, է (ē)-ն հանդիպում է բառի ուղիղ, իսկ ե (e)-ն՝ թեք եւ բաղադրեալ ձեւերում (հմմտ. աղուէս, բայց՝ աղուեսադրոշմ, աղուեսակերպ, աղուեսաւում, աղուեսենի, եղէգն, բայց՝ եղեգնաբոյս, եղեգնախումկ, եղեգնախոի, եղեգնաշամբ, եղեգնաշէն, եղեգնուտ, եղեգնեայ եւ այլն): Ըստ իս՝ է (ē) > ե (e) անցումը բառային շեշտի դէպի աջ՝ վերջին ձայնաւորը, տեղաշարժի հետեւանք է, որի արդիւնքում շեշտից զրկուած երկար ձայնաւորը թուլանում է եւ վերածուում կարճի (հմմտ. աղուէ՛ս–աղուեսո՛ւ, եղէ՛գ(ը)ն–եղեգա՛ն): Իհարկէ, կան առանձին բացառութիւններ, երբ բաղադրեալ կազմութիւնները գրական յուշարձաններում հանդիպում են զուգաձեւութիւններով (հմմտ. եղեգնաձեւ // եղէգնաձեւ, եղեգնիկ // եղէգնիկ): Ըստ ամենայնի, դրանց է-ով ձեւերը գրչագրական վրիպակներ են կամ կարող են բացատրուել լեզուի խօսակցական տարբերակների՝ բարբառների ազդեցութեամբ²⁷:

3) Հ.–ե. ցեղակիցների հետ տիպաբանական զուգահեռները եւս վկայում են է-ի՝ որպէս երկար ձայնաւորի մասին: Որպէս կանոն՝ եթէ ցեղակից լեզուն չի պահպանել նախալեզուի երկբարբառային ձեւը, ապա վերածել է երկար ձայնաւորի (հմմտ. *deik- «ցոյց տալ, ասել» > յուն. δεικνอยμι, գոթ. ga-teihan «յայտարարել, հանրայնացնել», բայց՝ լատ. dēcō, հ. վ. գերմ. zīhan «մէկին մի բան հաղորդել, մէկին մեղադրել»,– *keigh – «ցատկել, աշխոյժ, առոյգ» > հյ. սէգ, սնսկ. sīghrā- «աշխոյժ, արագ», անգսք. hīgian «շտապել, առաջանալ»,– *xēida / *xōida- «գիտենալ» > հյ. գէտ-, յուն. (F)οἶδα, բայց՝ սնսկ. vēda «գիտեմ», հայաւ. թեծ «գիտեմ»,– *ei-ti «նա գնում է» > յուն. εἶσι «(նա) գնում է», լիտ. eit(i), բայց՝ սնսկ. ēti,– *sneigūh – «ձիւն է գալիս» > յուն. νείφετ, հլատ. nīvit, հ. վ. գերմ. snīwan եւ այլն): Իհարկէ, երբեմն սպասելի երկբարբառի կամ երկար ձայնաւորի փոխարէն առկայ է կարճ ձայնաւոր (հմմտ. *ei-ti > լատ. it), սակայն դրանից օրինաչափութիւնը չի խախտում: Այն, որ հին հայերէնի երկբարբառային ծագում ունեցող է (ē)-ն եղել է երկար ձայնաւոր եւ ոչ թէ երկբարբառակերպ, անուղղակիօրէն կարող են վկայել նաեւ հետեւեալ տիպաբանական տուեալները. ա) հ.–ե. *ei երկբարբառն ընդհանուր կելտերէնում տուել է ē. «լատիններէնից փոխառուած բառերում եւս

²⁷ «Առձեռն բառարան հայկազնեան լեզուի» բառարանում բաղադրեալ կազմութիւնները եւս ունեն բացառապէս է-ով տարբերակներ (տե՛ս ԱԲՀԼ, էջ 260):

ē է զարգացել նաեւ նոր կելտերէնում»²⁸, բ) գերմանական լեզուներում ē է տուել հ.-ե. երկար *ē+*i երկբարբառային կապակցութիւնը²⁹; Իսկ որ հին հայերէնի է (ē)-ն եղել է երկար ē-ի, այլ ոչ թէ երկար ī-ի գրային նշանը (նկատի ունենալով, որ հ.-ե. *ei-ն հայերէնում տուել է նաեւ ի), երեւում է նրանից, որ աշխարհաբարեան հայերէնում հին է-ն բառի ուղիղ ձեւում անցել է ե-ի, այլ ոչ թէ ի-ի (հմմտ. գէս > գես, կէս > կես, ծէս > ծես, հանդէս > հանդես, շէն > շեն եւ այլն):

4) Հին հայերէնի է-ի հնչաբանական արժէքը որոշելու առումով կարելի է նշանակութիւն ունեն նաեւ իրանական փոխառութիւնները: Դրանցում դիտարկուում են հետեւեալ համապատասխանութիւնները.

ա) հին պարսկերէնի ai / աւեստայի aē երկբարբառներ, միջին պարսկերէնի ē ձայնաւոր > հյ. է (հմմտ. իրան. *apa-vēn, աւ. apa- (հյ. ապա-) vaēna- «նայել» > հյ. ապաւէն,– իրան. *gēs, մպրսկ. gēs > հյ. գէս «մաղ»,– իրան. gōmēš, մպրսկ. gāvmēš > հյ. գոմէշ (-ո / ի-ա),– իրան. *dēm, մպրսկ. dēm > հյ. դէմ,– իրան. *zēn, աւ. zaēna-, մպրսկ. zēn > հյ. զէն(-ք),– իրան. *handēs, աւ. daēs > հյ. հանդէս,– իրան. *hēn, հպրսկ. hainā, աւ. haēnā, մպրսկ. hēn «թշնամի բանակ» > հյ. հէն «աւազակ»,– իրան. *hravēd, աւ. fravaēd- «նկատել» > հյ. հրաւէր,– իրան. *yāvēž, աւ. yavaēji- «մշտակեաց» > հյ. յաւէժ (/ յաւէրժ),– իրան. yāvēt, աւ. yavaētāt, մպրսկ. yāvēt «յաւիտեան» > հյ. յաւէտ,– իրան. *nikārēn > հյ. նկարէն «նկարուած, գունագեղ»,– իրան. nivēd, աւ. ni-vaēd, մպրսկ. nivēdēm > հյ. նուէր «տաճարին կամ աստծուն նուիրաբերուած իր»,– իրան. *pardēz, աւ. pairi-daēza- > հյ. պարտէզ,– իրան. *šēn, սողդ. šēn > հյ. շէն,– իրան. *(a)xšēt, աւ. xšaēta- «փայլուն», մպրսկ. šēt «փայլ. կարմիր» > հյ. աշխտ «կարմիր, հնագոյն»,– իրան. *pēs, աւ. paesa- «զարդարանք» > պէս,– իրան. *pēt «գնալ», մպրսկ. apāyēt > հյ. պէտ(-ի),– իրան. *vēg, աւ. vaēya «հարուած». > հյ. վէգ «վէճ, կռիւ»,– իրան. *vēž, աւ. vaeg-, մպրսկ. vēž «թափահարել, նետել» > հյ. վէժ (վիժել) «վիժում, թափուելը»,– իրան. *vēč > հյ. վէն «վէճ»,– իրան. vēm, աւ. vaēmā «ժայռածերպ», մպրսկ. vēm «վեմ, քար» > հյ. վէմ «վէմ, կարծր քար»,– իրան. *virēp > հյ. վրէպ «շեղում. թիր»,– իրան. *tēγ, աւ.

²⁸ S. G. Льюис, Х. Педерсен, Краткая сравнительная грамматика кельтских языков, Москва, 1954, էջ 35:

²⁹ S. G. Сравнительная грамматика германских языков, т. II, Москва, 1962, էջ 80: Իսկ երկար ī-ն համարուում է հ.-ե. *ei երկբարբառի հետագայ հնչոյթափոխութիւնը գերմանական լեզուներում (նշ. աշխ., էջ 74):

taēya– «սուր. սայր» > հյ. աէգ «նիզակի ծայրի սուր երկաթ»,– իրան. **kēš*, մպրսկ. *kēš* > հյ. ֆէշ «գրադաշտական կրօն»).

բ) միջին պարսկերէնի երկար *ē* / կարճ *e* > հյ. ե (*e*). *ē* > ե (հմմտ. *avēr* > աւեր «քանդուած. աւերում», *apēniyaz* > ապենիազ «կարիք չունեցող. անսպառ», *dēh* > դեհ «կողմ», *dēhkan* > դեհկան «կուսակալ», *dēn* > դեն «կրօն, հաւատ», *dēspan* > դեսպան, *dēv* > դեւ «չար ոգի. կուռք»,– *dušxēm* > դոխեմ,– *frēštak* > ֆրեշտակ, *kēšt* > կեշտ «կրօն»).

e > ե (հմմտ. *šep* > շեպ «զառիվայր», *pet* > պետ «մեծաւոր. սկիզբ», *veh* > վեհ «վսեմ, ընտիր»).

գ) միջին պարսկերէնի երկար *ē* > հյ. ի (*i*) (հմմտ. *apēkam* > ապիկամ «անկամ, ծոյլ»³⁰, *apēdat* > ապիրատ «անտեղի. անիրաւ», *dēmak* > դիմակ «դէմք, կերպարանք»,– մպրսկ. *dēpāk* > դիպակ «մետաքսեայ ոսկեթել գործուածք»,– *andēman* > անդիման «դիմաց. Դէմ առ դէմ», *nēzak* > նիզակ, *vēžak* > վիժակ «ջրի հոսք», *tāčikēnak* > տանկինակ «ծեծի գաւազան»).

դ) իրանական *a* > հյ. ե (*e*) (հմմտ. **āhrakan* «կրակային» > ահեկան (հայկական տոմարի 9-րդ ամիսը),– հպրսկ. *aruvasta*– «առոյգութիւն» > արուեստ,– իրան. **gar* > գեր «ողբ, լաց, կոծ»,– իրան. **dahakān* (?) > դեկան³¹,– մպրսկ. *darzīk* > դերձակ,– մպրսկ. *karp* «կերպարանք, կերպ» > կերպ).

ե) իրանական (/աւեստա, մպրսկ.) *i/ī* (/a) > հյ. ի (*i*) (հմմտ. **amīč*, մպրսկ. «որսի մսով կերակուր» *amīč* > ամի՛ն «մսեղէն կերակուր»,– իրան. **hakīrč*, մպրսկ. *hakīrč* > հակիրճ,– իրան. **hērīk*, մպրսկ. *hērīk* > հիրիկ «մի ծաղիկ»,– իրան. **mišt-*, աւ. *mišti-* > միշտ,– իրան. **parīštā*, մպրսկ. *parīst-*

³⁰ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» (այսուհետեւ՝ ՆՀԲ) եւ «Առձեռն» բառարաններն ունեն ապիմակ «ինքնագլուխ, անզգամ» ձեւով (տե՛ս ՆՀԲ, հ. I, 1979, էջ 276, ԱԲՀԼ, 1988, էջ 106), բայց չը. Աճառեանն ուղղում է ապիկամ՝ համարելով փոխառութիւն միջին պարսկերէնից (տե՛ս Հ. Ս. ԱՍԱՌԵԱՆ, ՀԱԲ, հ. I, 1971, էջ 235): Նրան հետեւում են նաեւ Գ. Զահուկեանը եւ Ռ. Ղազարեանը (տե՛ս Գ. ԶԱՀՈՒԿԵԱՆ, ՀՍԲ, էջ 69, Ռ. ՂԱԶԱՐԵԱՆ, 2004, էջ 165):

³¹ Ըստ Հ. Հիւրշմանի՝ իրանական *dahgān*-ից, որն էլ իր հերթին՝ *dah* «տասը» նշանակող ձեւից (տե՛ս Հ. ՀԻՒՐՇՄԱՆ, Հայերէնի քերականութիւն (այսուհետեւ՝ ՀՔ), Երեւան, 2003, էջ 133): Չը. Աճառեանը համարում է փոխառութիւն հին պարսկերէնից. նախնական ձեւն էր դահեկան, «որ բուն նշանակում էր «Դարեհական, Դարեհի նշանով դրամ», ամփոփուելով դարձել է դեկան, բայց բուն ձեւը չի նշում (տե՛ս Հ. Ս. ԱՍԱՌԵԱՆ, ՀԱԲ, հ. I, 1971, էջ 614–615, 645–646): Ըստ Գ. Զահուկեանի՝ իրան. **dahakān* (?) ձեւից, որի պարսկերէն տարբերակն է *dahgani*– «տասանոց» (*dah* «տասը» բառից), որ հին ոսկէ դրամ էր (տե՛ս Գ. ԶԱՀՈՒԿԵԱՆ, ՀԼՊՆԺ, էջ 522):

(/parast-) «պաշտող» > պարիշտ (ամ-պարիշտ, ամ-բարիշտ «անհաւատ, անաստուած»),— իրան. *vīn, մպրսկ. vīn > վին «մի տեսակ քնար»):

Գրաբարեան հայերէնի է (ē)-ի՝ [եյ] հնչիւնական արժէքով երկբարբառակերպ լինելու տեսակէտն ամէնից հետեւողականօրէն պաշտպանել է ակադ. էդ. Աղայեանը: Որպէս այդ տեսակէտի լրացուցիչ հիմնաւորում, քննելով իրանական փոխառութիւններում գրսեւորուած՝ վերոյիշեալ առաջին երեք՝ ա), բ), գ), կէտերում ներկայացուած հնչիւնական անցումները, ի հաստատումն իր տեսակէտի, նա սահմանում է հնչիւնական երկու կանոն, ըստ որոնց՝ 1) հայերէնի բառամիջի է-ն ստացուել է հին պարսկերէնի ai (= աւեստայի aē) երկբարբառից, 2) այդ երկբարբառի արտացոլումն են նաեւ ի-ով անցումները, 3) ե-ն ստացուել է միջին պարսկերէնի (ըստ Աղայեանի՝ «պահլաւական») e-ից³²: Այս սկզբունքների նախագաղափարը տուել էր դեռեւս Ա. Մէյէն [MEILLET 1936, 44–45]³³:

Ամենեւին չվիճարկելով վերոյիշեալ կանոնների հաւաստիութիւնը՝ հարկ ենք համարում նշել հետեւեալը. 1) Վերոյիշեալ համապատասխանութիւնները վերաբերում են տարածամանակեայ հայեցակերպին եւ չեն արտացոլում գրաբարեան հայերէնի համաժամանակեայ պատկերը: Եթէ նոյնիսկ բառամիջում է ունեցող բառերը փոխառուել են հին պարսկերէնից կամ աւեստայից, դեռեւս չի նշանակում, որ յաջորդող հարիւրամեակների, աւելի ճիշտ՝ շուրջ հազար տարուայ ընթացքում (Ք. ա. 2-ից մինչեւ Ք. յ. 6. դդ.)³⁴ դրանց արտասանութիւնը մնացել էր նոյնը, հետեւաբար է-ն պահպանել էր իր երկբարբառային բնոյթը: Այն, որ է-ն Ե. դարում եւ նրանից առնուազն մի քանի դար առաջ այլեւս երկբարբառ չէր, վկայում են միջին պարսկերէնից կատարուած փոխառութիւնները, որոնցում գրաբարեան հայերէնի դիմաց միջին պարսկերէնն ունէր երկար պարզ ē ձայնաւոր: Կարելոր է նաեւ այն, որ իրանական փոխառութիւնների մեծ մասը կատարուել են հէնց միջին պարսկերէնից³⁵: Միջին պարսկերէնը ոչ

³² Տէս է. Գ. ԱՂԱՅԵԱՆ, նշ. աշխ., էջ 136–139:

³³ Տէս Ա. MEILLET, նշ. աշխ., էջ 44–45:

³⁴ Հին պարսկերէնը գործառնել է Ք. ա. 2-դ. դդ., իսկ աւեստայի լեզուին վերագրուում է աւելի վաղ կազմաւորում, թերեւս՝ Ք. ա. 10-դ. (տե՛ս Основы иранского языкознания (древнеиранские языки), Москва, 1979, էջ 12, Գ. ԶԱՀՈՒԿԵԱՆ, ՀԼՊՆԺ, էջ 32):

³⁵ Տէս Հ. ՀԻՒՐԵՄԱՆ, ՀՔ, էջ 12–13, Հ. ր. ԱՃԱՌԵԱՆ, ՀԼՊ, հտ. I, 1940, էջ 235–236, Գ. ԶԱՀՈՒԿԵԱՆ, ՀԼՊՆԺ, էջ 493, 507: Եւ Հ. Հիւբշմանը, եւ Հ. ր. Աճառեանը հայերէնի իրանական փոխառութիւնների մեծ մասը վերագրում են յատկապէս պարթեւների տիրապետութեան ժամանակաշրջանին՝ Ք. ա. 256–226 թթ. (նոյն տեղում):

միայն ժամանակագրորէն աւելի մօտ էր գրաբարեան հայերէնին, քան հին պարսկերէնը եւ աւեստայի լեզուն, այլեւ նրա 2-րդ ենթաշրջանը համընկնում է գրաբարի առաջին ենթաշրջանին (Ք. ա. Դ. – Ք. յ. է.–Լ. դդ.)³⁶, ուստի տրամաբանական է, որ այդ շրջանի փոխառութիւններն աւելի հարազատօրէն արտացոլուէին հայերէնում, մանաւանդ որ լեզուական շփումները եւս կրել են անմիջական բնոյթ: 2) Այն, որ միջին պարսկերէնի ինչպէս երկար $\bar{e}$ -ն, այնպէս եւ կարճ e -ն հայերէնում կարող էին արտացոլուել $\bar{e}$ -ով (իմա՛ կարճ e -ով), ըստ իս՝ կարող է լինել երկու կարգի բացատրութիւն. ա) հաւանական է, որ է ($\bar{e}$)-ի եւ է (e)-ի հնչիւնական (իմա՛ հնչոյթային) տարբերութիւնը Ե. դ. կէսերից արդէն իսկ տարբերակումների տեղիք է տուել, բ) եւ (e)-ով գրութիւնները հետագայ դարերի սխալ գրչութիւնների դրսեւորումներ (իմա՛ վրիպակներ) են, երբ այդ երկու հնչոյթների տարբերութիւնն այլեւս ամբողջութեամբ ջնջուած էր, եւ գրիչը (= ձեռագիր արտագրողը), հետեւելով իր ժամանակի արտասանութեանը, գրել է $\bar{e}$ -ով. 3) իրան. $a > \text{հյ. է } (e)$, իրան. (/աւեստա, մպրսկ.) $i/\bar{i}$ (/a) $> \text{հյ. է } (i)$ անցումները եւս վկայում են, որ գրաբարեան հայերէնին անմիջականօրէն նախորդող դարերում իրանական պարզ ձայնաւորն է վերածուել հայերէնի պարզ ձայնաւորի, այլ ոչ թէ՛ երկբարբառը:

Հետեւաբար, հայ-իրանական հնչոյթային առնչութիւնները նոյնպէս վկայում են գրաբարեան հայերէնի է ($\bar{e}$)-ի՝ որպէս պարզ երկար ձայնաւորի հնչոյթային կարգավիճակի մասին³⁷:

Այժմ, երբ ակնյայտ է, որ գրաբարեան հայերէնում է ($\bar{e}$)-ն՝ 1) երկար պարզ ձայնաւոր էր եւ է (e)-ի հետ նրա հակադրութիւնն ունէր քանակական բնոյթ, 2) բառավերջի դիրքում է ($\bar{e}$) ձայնաւոր կարող էր լինել ոչ միայն բայի որոշ խոնարհուած ձեւերում (եւ լծորդութեան բայերի սահմ.

³⁶ СЕУ Основы иранского языкознания (среднеиранские языки), Москва, 1981, էջ 6:

³⁷ Պատկերացնելու համար, թէ ինչ աստիճանի փոփոխութեան կարող էր ենթարկուել հին հայերէնի հնչոյթային համակարգը շուրջ հազար տարուայ ընթացքում, կարելի է համեմատել Ե. դ. գրաբարեան հայերէնի եւ, օրինակ, ԺԳ.–ԺԴ. հարիւրամեակների միջին հայերէնի, մասնաւորապէս վերջինիս առաւել կանոնարկուած տարբերակը համարուող Կիլիկեան հայերէնի հնչոյթային համակարգերը, որոնց տարբերութիւններն զգալի են: Կարծում ենք՝ բաւական է միայն ասել, որ, օրինակ, գրաբարեան հայերէնի բարդ հնչոյթները՝ երկբարբառային, եռբարբառային եւ քառբարբառային կազմութիւնները, միջին հայերէնում ամբողջութեամբ ենթարկուել էին պարզեցման՝ վերածուելով պարզ ձայնաւորների կամ երկհնչիւնների (տես ՅՕ. ՎԱՐՍՏ, Կիլիկեան հայերէնի պատմական քերականութիւն, Երեւան, 2002, էջ 24–116, Ս. ՂԱԶԱՐԵԱՆ, Միջին հայերէն, գ. Ա., Երեւան, էջ 135–290, Ակնարկներ միջին գրական հայերէնի պատմութեան, հտ. Ա., Երեւան, 1972, էջ 58–168):

նրկ., եզ. Թ., 3-րդ դ.-ում, հրամ. եզ. ձեռում), այլեւ գոյականի ուղիղ ձեռում (հմմտ. մարգարէ, բազէ, բոպէ, միջաւրէ (< միջաւրեայ), աշտէ (< աշտեայ) եւ այլն),— պիտի պատասխանել եւս մէկ հարցի. է (ē)-ն եւ Ե (e)-ն կարո՞ղ էին գտնուել նաեւ լրացուցիչ բաշխման յարաբերութեան մէջ, այսինքն՝ որոշակի դիրքում հանդէս գալ իբրեւ միեւնոյն հնչոյթի կիրառական տարբերակներ, որովհետեւ գրաբարեան բառը չէր կարող աւարտուել Ե (e)-ով: Ըստ իս՝ պատասխանն ակնյայտ է. ո՛չ, որովհետեւ վերոյիշեալ քննութիւնը պարզեց, որ երկուսն էլ ինքնուրոյն հնչոյթներ էին՝ բառասկզբի եւ բառամիջի դիրքերում իմաստատարբերակիչ գործառնոյթով: Ճիշտ է՝ բաղաձայնով սկսուող միավանկ բայերն անցեալ կատարեալում բառասկզբում ստանում էին Ե նախադասելուածը (հմմտ. *եգիտ* «(նա) գտաւ», *եթող* «(նա) թողեց», *եհաս* «(նա) հասաւ», *եդ* «(նա) դրեց», *եա* «(նա) տուեց» եւ այլն), իսկ ձայնաւորով սկսուողները՝ է (հմմտ. *էանց* «(նա) անցաւ», *էառ* «(նա) առաւ», *էաւծ* (Λεωδ) «(նա) օծեց» եւ այլն), սակայն նախ՝ դա ձեւաբանական մակարդակի իրողութիւն է, ապա՝ հարցի էութիւնը փոխել չի կարող, որովհետեւ է (ē)-ն եւ Ե (e)-ն ոչ միայն ազատօրէն կիրառուում են բառասկզբում՝ բաղաձայնանախորդ դիրքում (հմմտ. *եզր*, *եղէգն*, *եռ* «եռում, եռացող բան», *երգ*, *երդ*, *երկն*, *էգ*, *էշ*, *էջ*, *էփիմերտէ* (Եփրեմ-վերդի) «գուշակութեան գիրք» եւ այլն), այլեւ, ինչպէս տեսանք, այդ դիրքում եւս իրականացնում են իմաստատարբերակիչ (= հնչոյթաբանական) գործառնոյթ:

Ուշագրաւ է, որ, իբրեւ կանոն, բառավերջի դիրքում է (ē) ունեն փոխառեալ բառերը, ընդ որում՝ փոխատու լեզուում բառերի մեծ մասը, մասնաւորապէս իրանականներն այդ դիրքում չունեն երկար ձայնաւոր կամ երկբարբառ, որն օրինաչափօրէն հայերէնում վերածուէր է (ē)-ի (հմմտ. ապաղարէ «մետաղեայ աման» (< պրսկ. *ābχōra*)³⁸, բազէ «գիշակեր թռչուն» (< մպրսկ. *bāz* (*bāz*)), պրսկ. *bāz*, *bāza*)³⁹, մարգարէ «մարգարէ, գուշակ» (իրան. < *mārēgar* (պրթեւ.), *mārkarēk* (սողդ.)⁴⁰, բոպէ «ակնթարթ, րոպէ» (< յուն. *ρόπή*)⁴¹ եւ այլն): Ինչպէս տեսնում ենք, նշուածներից

³⁸ Տէս Հ. ր. ԱճԱՌԵԱՆ, ՀԱԲ, հ. I, էջ 227, Գ. ՋԱՀՈՒԿԵԱՆ, ՀԱԲ, էջ 67:

³⁹ Տէս Հ. ՀԻՒԲՇՄԱՆ, ՀՔ, էջ 114, Հ. ր. ԱճԱՌԵԱՆ, ՀԱԲ, հ. I, էջ 375, Գ. ՋԱՀՈՒԿԵԱՆ, ՀԱԲ, էջ 110:

⁴⁰ Տէս Հ. ր. ԱճԱՌԵԱՆ, ՀԱԲ, հ. III, էջ 276–277, Գ. ՋԱՀՈՒԿԵԱՆ, ՀԱԲ, էջ 515:

⁴¹ Տէս Հ. ՀԻՒԲՇՄԱՆ, ՀՔ, էջ 386, Հ. ր. ԱճԱՌԵԱՆ, ՀԱԲ, հ. III, էջ 444, Գ. ՋԱՀՈՒԿԵԱՆ, ՀԱԲ, էջ 739:

միայն երկուսը՝ իրանական մարգարէ (սողգիական *mārkarēk* տարբերակով) եւ յունական բռալէ բառն են հարազատօրէն արտացոլուել հայերէնում, իհարկէ, եթէ նկատի չունենանք, որ՝ ա) յունական ῥοπή-ն բառասկզբում պիտի հնչէր հր (= ρ [hr])՝ հրոպէ⁴², իսկ սողգիական *mārkarēk*-ն էլ վերջում ունի կ (k), որը չունի հայերէն ձեւը:

Անշուշտ, ենթադրելի է, որ երկբարբառային ծագում ունեցող է (ē)-ն երկար պարզ ձայնաւորի է վերածուել երկբարբառակերպի միջանկեալ անցումային օղակով, բայց այդպիսին այն եղել է նախագրաբարեան ինչ-որ փուլում: Պարզեցման գործընթացի միտումը շարունակուել է նաեւ գրաբարեան հայերէնի շրջանում՝ ի վերջոյ հանգեցնելով երկար՝ է (ē) եւ կարճ՝ ե (e) ձայնաւորների քանակական (= հնչոյթային) տարբերութեան չէզոքացման, որը, սակայն, չի արտացոլուել գրութեան մէջ: Այդ երկու լեզուական միաւորների հնչոյթային նոյնականացման պատճառ կարող էր լինել այն, որ հայերէնը չէր պահպանել միեւնոյն ձայնաւորի երկար եւ կարճ տարբերակները՝ որպէս ինքնուրույն հնչոյթների հ.–ե. համակարգը: Ըստ այդմ՝ է (ē)-ի եւ ե (e)-ի հնչոյթային հակադրութիւնը գրաբարեան հայերէնում արդէն իսկ ոչ օրինաշափ (= հակահամակարգային) երեւոյթ էր, հետեւաբար նրա պահպանման լեզուական հիմքերը թոյլ էին: Հնարաւոր է, որ է-ի եւ ե-ի քանակական տարբերութեան չէզոքացումը սկիզբ է առել գրաբարեան հայերէնի սկզբնական շրջանում, օրինակ՝ Ե.–է. դարերում:

Կատարուած քննութիւնը բաւարար հիմքեր է տալիս ասելու, որ՝ 1) երկբարբառային ծագում ունեցող է (ē)-ն նախքան Ե. դ. վերածուել էր երկար պարզ ձայնաւորի, հետեւաբար այն գրաբարեան հայերէնի ձայնաւորական հնչոյթային համակարգի լիիրաւ անդամ էր. 2) է (ē)-ն հնչոյթային հակադրութիւններ է ձեւաւորել բոլոր երեք դիրքերում, իսկ ե (e)-ի հետ՝ միայն բառասկզբի եւ բառամիջի դիրքերում, որովհետեւ բառավերջում ե (e)-ն չի գործառուել. 3) բառավերջի դիրքում ե (e)-ի գործածութեան անհնարին լինելը, որը պայմանաւորած էր առհասարակ գրաբարեան

⁴² Ուշագրաւ է, որ յունարէնում բառասկզբում թաւ արտաբերութիւն ունեցող ῥήτιν-ն [hretine] հայերէնում արտասանուել է առանց թաւ շնչի՝ ռետին, իսկ ῥήτωρ-ը [retor]՝ թաւ շնչով՝ ռետոր (/ռետոր) «ճարտասան», այն դէպքում, երբ երկու բառերում էլ ռ (r) հնչիւնական միջավայրը նոյնն է: Նկատի ունենալով այդ բառերի բնոյթը (= գրքային բառապաշարի)՝ քիչ հաւանական ենք համարում խօսակցական լեզուի (= բարբառային) ազդեցութեամբ բացատրելը:

հայերէնի բառակազմութեան իւրայատկութեամբ, հիմք չէ այդ դիրքում նրանց միջեւ լրացուցիչ բաշխման (= այլահնչակային) յարաբերութիւն ճանաչելու համար. 4) է (ē)-ի եւ է (e)-ի՝ որպէս ինքնուրոյն հնչոյթների հակադրութիւնն ունէր քանակական բնոյթ, մի բան, որը օրինաչափ չէր գրաբարեան հայերէնի հնչոյթային համակարգի համար, եւ, թերեւս, հենց դա էլ աւելի ուշ եղել է նրանց հնչոյթային տարբերութեան չէզոքացման հիմնական պատճառը. 5) առանձին դէպքերում կարող է խօսք լինել նաեւ ազատ փոփոխական յարաբերութիւնների մասին մի կողմից՝ է (ē)-ի, միւս կողմից՝ է (e)-ի եւ ի (i)-ի միջեւ:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Գրաբարյան հայերեն, երկար ձայնավոր, երկրարբառակերպ, փակ ձայնավոր, Ա. Մելե, Հ. Աճառյան, Է. Աղայան, հնչոյթաբանական բնութագիր, համաժամանակյա հայեցակերպ, իրանական փոխառութիւններ

РЕЗЮМЕ

В арменоведении относительно фонологических характеристик древнеармянского է (ē) высказывались две точки зрения: 1) это был закрытым гласным, который противопоставлялся է (e) как открытому гласному (Мейе, Ачарян, Капанцян и др.); 2) это был дифтонг с фонетическим значением [tj/ei] (Агаян, Джаукян, Туманян и др.). В данной статье предлагается третья гипотеза, согласно которой древнеармянский է был долгим гласным, а его отличие от է было количественным. По существу, для обоснования новой точки зрения достаточно лишь аргументы синхронического анализа, но решение проблемы становится более убедительным при параллельном применении диахронических аргументов. В частности, заимствования среднеперсидского языка в древнеармянский, в котором армянский язык в основном имеет фонема է (ē) вместо долгого ē среднеперсидского языка, показывает, что է (ē) древнеармянского языка, скорее всего, был долгим гласным.

SUMMARY

In Armenian Studies, two major views have been proposed regarding the phonemic nature of the OA (Grabar) sound "ե" (ē). a. One view states that it was a vowel with a closed articulation, contrasting with "է" (e), which was an open vowel (Meillet, Acharyan, Ghapantsyan, etc.). b. another view suggests that it was a diphthong [tʰ/ei̯], representing a distinct sound (Aghayan, Jahukyan, Toumanyan, etc.). The present article introduces a third perspective, proposing that the OA "ե" (ē) was a long vowel, with its difference from "է" being of a quantitative nature. In fact, this new view can easily be supported by the results of synchronic analysis. However, the argument becomes more convincing when supported by diachronic evidence. Specifically, the borrowing of words from Middle Persian into OA, where the long "ē" of Middle Persian corresponds to the Armenian (ē) phoneme, suggests that the OA (ē) was most likely a long vowel.

